

ՅՈՑԱԼԻՑԱՐԻՉՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՏՄԱԿԱՆ ՅԵՆՈՄԵՆ

Ռ. Հ. ՉԵՆԵՍՅԱՆ

90-ական թվականներից սկսած տոտալիտարիզմի հիմնահարցը դարձել է քաղաքագիտության, սոցիոլոգիայի, իրավագիտության և այլ գիտությունների կարևոր հիմնահարցերից մեկը: Այն իրադարձությունները, որոնք տեղի ունեցան նախկին խորհրդային երկրում, ինչպես նաև սոցիալիստական համարվող մյուս երկրներում, նոր լիցք հաղորդեցին տոտալիտարիզմի ֆենոմենի ուսումնասիրությանը: Տոտալիտարիզմը (ամբողջատիրություն. լատ. totalis-ամբողջ, լրիվ, միասնական և այլն) բռնի քաղաքական գերիշխանության համակարգ է, որը բնորոշվում է հասարկության տնտեսական, սոցիալական, գաղափարական, հոգևոր, անգամ կենցաղային կյանքի լիակատար ենթարկվածությամբ տիրապետող ընտրախավի իշխանությանը, որը կազմակերպված է ռազմա-բյուրոկրատական ամբողջական ապարատի շրջանակներում և ղեկավարվում է առաջնորդի (լիդերի) կողմից¹:

Զնայած տոտալիտարիզմի ֆենոմենը իր արմատներով հասնում է պատմության խորքը, բայց որպես ձևավորված ամբողջություն առավել բնորոշ է 20-րդ դարին: Այդ եզրույթը քաղաքական շրջանառության մեջ է դրել Մուսոլինին՝ իր շարժումը և ռեժիմը բնութագրելու համար: Տվյալ դեպքում նա հենվել է ֆաշիզմի նշանավոր գաղափարախոս Ջովանի Զենտիլինիի աշխատությունների վրա, որը Մուսոլինիի կառավարության մեջ զբաղեցնում էր (1922—24 թթ.) լուսավորության նախարարի պաշտոնը:

Նախկին խորհրդային երկրում «տոտալիտարիզմ» եզրույթը շրջանառության մեջ է դրվել հետպատերազմյան շրջանում և հիմնականում օգտագործվել է քարոզչական նպատակներով՝ արևմուտքի ֆաշիստական և պրոֆաշիստական ռեժիմները բնութագրելու համար: Օրինակ՝ Խորհրդային մեծ հանրագիտարանում ասված է. «տոտալիտար պետությունը» բնութագրվում է որպես բուրժուական պետության տարատեսակ, առավել հետադիմական իմպերիալիստական տարրերի բացահայտ դիկտատուրայով»: Եվ որպես օրինակ բերվում է հիտլերյան Գերմանիան և ֆաշիստական Իտալիան²:

Տոտալիտարիզմի տեսական իմաստավորման համար հզոր խթան հանդիսացավ երկրորդ աշխարհամարտը: Այս առումով հիշատակության արժանի է Ֆրիդրիխ Հայեկի 1944 թ. անգլերեն լեզվով լույս տեսած «Ճանապարհ դեպի ստրկություն» գիրքը, ուր հեղինակը դուրս գալով դուտ տնտեսագիտական տեսությունների շրջանակներից՝ շոշափում է սոցիալ-քաղաքական, հոգեբանական և բարոյագիտական հարցեր, որոնք արդյունք են 20-րդ դարի դրամատիկական բախումների:

Հանգամանորեն վերլուծելով արևմտաեվրոպական հումանիստական մտքի

¹ Տե՛ս Современная западная социология. Словарь, М., 1990, էջ 351:

² Տե՛ս ВСО; М., 1989, ք. 48, էջ 67:

պատմությունը սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից, Հայկին ընդգծում է տոտալիտարիզմի և սոցիալիստական ուսմունքների միջև եղած ծագումնաբանական կապը, ցույց տալիս «մեծ ուտոպիայի» այլասերման և բացարձակ բռնությունն ու կամայականության թագավորության վերաճման պատճառներն ու նախադրյալները: Իսկ «Տոտալիտարիզմի ակունքները» (Նյու-Յորք, 1951 թ.) գրքի հեղինակ Հաննա Արենդտը, որպես բռնության թագավորությանը բնորոշ օրինակ, ներկայացնում է նացիստական համակենտրոնացման ճամբարները: Եվ եթե Հայկին առաջին հերթին հետաքրքրում է տոտալիտարիզմի հոգևոր ծագումնաբանությունը, ապա Արենդտը հիմնականում ուշադրությունը բեռնում է հենց «տոտալիտար անհատի» առանձահատկությունների վրա, հիմնավորում, թե ինչպես է այդ անհատը դառնում տոտալիտար ռեժիմի կատարյալ, իդեալական օբյեկտ: Հեղինակը հանգում է այն եզրակացության, թե տոտալիտար մարդը ավտոմատացված մարդ է, իսկ տոտալիտար շարժումը ոչ թե դասակարգերի, այլ սոցիալական հիմքերից կտրված զանգվածների շարժում է:

1952 թ. ԱՄՆ-ում տեղի ունեցած միջազգային գիտական համախորհրդողակցությունում տոտալիտարիզմի կոնցեպցիան ստացավ պաշտոնական կարգավիճակ հետևյալ ձևակերպմամբ. «Տոտալիտարիզմ կարելի է համարել փակ հասարակությունը, որում ամեն ինչ, սկսած երեխաների դաստիարակությունից մինչև մթերքների արտադրությունը, վերահսկվում է միասնական կենտրոնից»³:

Նույն 50-ական թվականներին ամերիկյան քաղաքագետները (հիմնականում վտարանդիներ) սկսում են մշակել տոտալիտար կառուցվածքների հայեցակարգը: Այդ ժամանակ աչքի ընկան Կարլ Ֆրիդրիխսը և Ջրիգնև Բեզինսկին, որոնք իրենց «Տոտալիտարիզմի դիկտատուրան և ավտոկրատիան» (1956 թ.) համատեղ աշխատության մեջ առանձնացնում են մի շարք բնութագրեր: Ի մի բերելով գրականության մեջ եղած տարբեր բնութագրերը և ելնելով նախկին խորհրդային երկրի փորձից, կարծում ենք նպատակահարմար է առանձնացնել հետևյալ բնութագրերը.

1) Միակ, հիերարխիկ կազմակերպված զանգվածային կուռակցության առկայությունը, որը, որպես կանոն, դեկավարվում է խորիզմատիկ առաջնորդների կողմից: Առանջորդ, որը ձգտում է ապացուցել ընտրած նպատակներին ցանկացած միջոցներով հասնելու ճշմարտացիությունը: Նման գեպքերում իշխանությունը առաջնորդներից գնում է դեպի ներքև և ոչ թե հակառակը:

2) Բոլորի համար պարտադիր, տիրապետող գաղափարախոսությունն ունկայությունը, գաղափարախոսություն, որի առանցքն է կազմում «կատարյալ հասարակության», որպես մարդկային հասարակության զարգացման վերջին փուլի, մասին ուտոպիական պատկերացումը: Դա մի գաղափարախոսություն է, որը բնակչության շրջանում կարողանում է ապահովել գոյությունն օւնեցող հասարակարգի ճշմարտացի ու արդարացի լինելու մասին պատկերացումները, միաժամանակ բացառելով այլախոսությունը և հատկապես այլ բնույթի գործողությունների դրսևորումները: Տոտալիտար ռեժիմը նաև գաղափարական ռեժիմ է, որում միշտ առկա է սեփական «աստվածաշունչը»: Այն իմաստով կարծում ենք, որ ամբողջատիրական հասարակության մեջ պետությունը երկրորդական է և ըստ էության հանդես է գալիս միայն որպես գաղափար-

³ Тоталитаризм как исторический феномен, М., 1989, с. 81.

Նարիզմա (Ռուս. харизма— աստծո Քիչք, պարզն)— առաջնորդ օժտված քաջասիկ ինչյով և այլն:

րական իշխանության գործիք: Իրականում այստեղ իշխանությունը պատկանում է ոչ թե պետությունը, այլ կուսակցությունը, այն գաղափարախոսության կրողին, որը ծնել, ստեղծել է այդ ուժերը:

1920 թ. Լենինը անդրադառնալով պրոլետարիատի դիկտատուրայի էության պարզաբանմանը, խոստովանում է, որ այն իրականացնում է ոչ թե բանվոր դասակարգը, այլ «ավանգարդը»՝ կուսակցությունը, որին ղեկավարում է Կենտրոնական Կոմիտեն: «Քաղաքական կամ կազմակերպչական ոչ մի կարևոր հարց մեր հանրապետության մեջ պետական ոչ մի հիմնարկ չի լուծում, առանց կուսակցության Կենտկոմի ղեկավար ցուցումների»⁴: Լենինի մահից հետո էլ Քաղբյուրոն շարունակել է ղեկավարել ամեն ինչ, այդ թվում նաև՝ պետությունը:

3) Տոտալիտարիզմը մենաշնորհ վերահսկողության է ենթարկում արտադրությունը և տնտեսությունը, ինչպես նաև կյանքի մյուս բոլոր ոլորտները, ներառյալ կրթական համակարգը, զանգվածային լրատվության միջոցները և այլն: Զուտ տոտալիտար պետությունում ոչ մի բնագավառ ազատ չէ վերահսկողությունից:

4) Բոլոր գինված ուժերի ղեկավարման մենաշնորհ իրավունք: Այստեղ առկա է նաև տեռորիստական ոստիկանության հսկողությունը: Այս առումով ցանկանում ենք նկատել, որ գոյություն ունեն նաև այնպիսի քաղաքական ուժեր, որ թեև ոստիկանությունն իրականացնում է տեռոր, բայց դրանք տոտալիտար ուժեր չեն: Օրինակ՝ Պինդեոտի կառավարման հատկապես սկզբնական շրջանում թեև Չիլիում շուրջ 15 հազար մարդ մահացավ համակենտրոնացման ճամբարներում, այնուհանդերձ այդ ուժերը տոտալիտար համարել չի կարելի հենց այն պատճառով, որ նրանում բացակայում էին տոտալիտարիզմին բնորոշ այնպիսի «սինդրոմներ», ինչպիսիք են՝ ա) զանգվածային կուսակցություն, բ) «սուրբ» միասնական գաղափարախոսություն, գ) ազատ ու շուկայական տնտեսություն, դ) կրթական համակարգի և զանգվածային լրատվության միջոցների ամբողջական վերահսկողություն:

Տոտալիտար ուժերի դրսևորման դասական օրինակ են ֆաշիստական Գերմանիան և նախկին Խորհրդային Միությունը: Հայտնի է, որ դեմոկրատական ուժերի առկայությունը մի շարք երկրներում (Անգլիա, ԱՄՆ, Ֆրանսիա և այլն) դրանց հնարավորություն տվեցին խուսափել տոտալիտարիզմի փորձությունից, գտնելու եղանակներ ու մեթոդներ այն հիմնահարցերի լուծման, որոնք ուղեկցում էին արդյունաբերության զարգացման նոր փուլին: Եվ տոտալիտարիզմի փուլով ստիպված էին անցնել հիմնականում այն երկրները, որտեղ դեմոկրատական կառուցվածքները կամ նոր էին ծրնունդ առնում, կամ շատ թույլ էին: Հենց այդպիսի երկրներն էին պատկանում Ռուսաստանը և Գերմանիան (ինչպես նաև Իտալիան, Իսպանիան, Պորտուգալիան և այլն):

Ռուսաստանում և Գերմանիայում տոտալիտարիզմի երևան գալու պայմանները նույնը չէին: Կային որոշակի տարբերություններ: Առաջին հերթին այն վերաբերում է արդյունաբերական զարգացման մակարդակներին: Հայտնի է, որ առաջին աշխարհամարտից հետո էլ Գերմանիան արդյունաբերական տեսակետից մնում էր որպես աշխարհի զարգացած երկրներից մեկը՝ իր առաջավոր տեխնոլոգիայով և արդյունաբերական միավորումների լավ զարգացած կառուցվածքներով: Պատերազմից հետո մոնոպոլիստական կապիտալը պահպանել էր իր դիրքերը և շոշափելի ազդեցություն էր գործում քաղաքական կյանքի վրա: Մինչդեռ Ռուսաստանը, պատերազմի սկզբում համարվելով

⁴ Վ. Ի. Լենին, ԵԼԾ, Բ. 41, էջ 37:

արդյունաբերական տեսակետից զարգացման միջին մակարդակ ունեցող երկիր, պատերազմից դուրս եկավ ծայրահեղ թուլացած: Սրան ավելացրած քաղաքացիական պատերազմը և տնտեսավարություն շիմանալը, որն ավելի խորացրեց ու բարդացրեց իրավիճակը: Եվ միայն 20-ական թվականների վերջերին դրվեց ծանր արդյունաբերության զարգացման հարցը: Այս փաստը նշում ենք հիշեցնելու, որ Ռուսաստանում շկար այնպիսի գործոն, ինչպիսին արդյունաբերողների ազդեցությունն է ֆաղափական կյանքի վրա:

Էական տարբերություններ կային քաղաքական կյանքում: Գերմանական կայսրը կառավարում էր զարգացած պառլամենտական հիմնարկությունների համակարգի առկայության պայմաններում, անցյալից եկող ավանդույթներով: Մինչդեռ ռուսական ցարը գլխավորապես հենվում էր ռազմաբյուրոկրատական մեքենայի վրա:

Տարբեր էր նաև սոցիալական կառուցվածքը: Գերմանիան մի երկիր էր, որտեղ բանվոր դասակարգը լավ կազմակերպված էր կուսակցություններում և արհեստակցական միություններում, իսկ գյուղացիության զգալի մասը վարում էր ամուր տնտեսություն: Առկա էր նաև մանր ու միջին ձեռնարկատերերի, արհեստավորների միջնախավը: Գերմանիան, ընդունված է ասել, նաև համալսարանների երկիր էր, ուր մեծ էր մտավորականության և ուսանողության դերը: Պատերազմից հետո էլ Ռուսաստանը շարունակում էր մնալ գլխավորապես գյուղացիական երկիր: Բանվոր դասակարգը հիմնականում կենտրոնացած էր խոշոր քաղաքներում, պահպանելով կապը գյուղական կենցաղի հետ: Արդյունաբերողների դասը նոր էր ձևավորվում և շուներ հասուն քաղաքական փորձ: Մտավորականությունն իր կազմով խայտարղետ էր, աստիճանավորները՝ պահպանողական: Տարբեր էր նաև ժամանակի ընթացքում բնակիչների մեջ ձևավորված վարքագիծը: Եթե գերմանացին կարգապահության, աշխատունակության, ճշտապահության և այլ հատկությունների մարմնացում էր, ապա ռուսը՝ ընդհակառակը, աչքի էր ընկնում համբերատարությամբ, հանդուրժողականությամբ ու անկազմակերպվածությամբ: Ռուս նշանավոր փիլիսոփա Ն. Բերդյաևն առանձնացնում է ռուսական հոգուն բնորոշ այնպիսի հաստատուն հատկանիշներ, ինչպիսիք են դավանականությունը, ճգնավորությունը, հանուն սեփական ինչ-որ հավատի տառապանքներ և զոհաբերություններ կրելու ընդունակությունը: Մեկ այլ առիթով նա ավելացնում է, թե ռուս մարդու գլխի մեջ հաճախ է մխրճվում ինչ-որ առեղծվածային անհեթեթություն՝:

Երկու երկրները տարբերվում էին նաև ազգային կազմով: Գերմանիան հիմնականում մեկ ազգի երկիր էր, իսկ Ռուսաստանը՝ բազմազգ:

Այս բոլորով հանդերձ, առկա էին նաև ընդհանուր գծեր: Ե՛վ Գերմանիայում, և՛ Ռուսաստանում տոտալիտարիզմի սերմերն ընկան հեղափոխությունների փորփրած հողի մեջ: Երկու երկրներում էլ շարժման մեջ մտան հսկայական թվով մարդիկ, որոնք հավատում էին հիմնված արդարության, սոցիալական ապոկալիպսիսի, աշխատանքի և կենցաղի խելացի կազմակերպման սկզբունքի վրա կառուցված նոր սոցիալական կարգերի ստեղծման հնարավորությունը:

Զբիգնե Բժեզինսկին իր «Մեծ կործանում: Կոմունիզմի ծնունդը և մահը 20-րդ դարում» (Նյու-Յորք, 1989) աշխատության մեջ այս կապակցությամբ նկատում է, թե և՛ ֆաշիզմին, և՛ կոմունիզմին բնորոշ էին ընդհանուր ցեղական հատկություններ, պատմական կապեր և բավականին շատ քաղաքական նմանություն: Իսկ Մ. Վոսլենսկին, որը որպես թարգմանիչ ներկա է եղել

• Տե՛ս Н. А. Бердяев, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, էջ 9, 34:

Նյութերի բերքյան պրոցեսին (հետագայում վտարանդի), անդրադառնալով ֆա-
շիզմի և զորանոցային սոցիալիզմի, որպես քաղաքական ուժի մենբերի դրսևոր-
ման ձևերի, ընդհանուր գծերին, 1990 թ. Լոնդոնում Երատարակված «Անվա-
նակարգություն» աշխատության մեջ առանձնացնում է. ա) գլխավոր առաջ-
նորդ իր մտերիմ զինակիցներով, բ) միասնական, միաձուլվ կուսակցություն,
գ) կեղծ պառլամենտ-օրինականացված անհավասարություն, դ) վայրագ, կա-
տաղի ոստիկանություն, ե) համակենտրոնացման ճամբարներ, զ) կեղծ, պըն-
գերես քարոզչություն, է) լրտեսություն և մատնություններ, տանջանքներ ու
մահապատիժներ և այլն, ը) պարտադիր, ստիպողական գաղափարախոսու-
թյուն⁶:

Ասացինք, որ տոտալիտար համակարգը լայն շրջանառության մեջ դրեց
«պրոպագանդա» հասկացությունը: Գերմանիայում ստեղծվեց պրոպագանդա-
յի նախարարություն՝ Գերբելի դեկավարությամբ: Ծիշտ է, շնայած նախկին
խորհրդային երկրում այդպիսի հատուկ նախարարություն չստեղծվեց, բայց
իրականում այդ աշխատանքները իր վրա էր վերցրել և «սրբությամբ» ու
հետևողականությամբ իրականացնում էր Կենտկոմի ագիտացիայի և պրոպա-
գանդայի բաժինը:

Ցանկանում ենք ավելացնել մեկ այլ հետաքրքիր նմանություն (զուգա-
դիպություն). ավստրիացի Շիկլզբուրգը դառնալով Հիտլեր, իսկ կովկասցի
Ջուղաշվիլին՝ Ստալին, հանդես էին գալիս այն ազգի անունից, որից նրանք
չէին սերել:

Այսպես, ժամանակի ընթացքում երկու համակարգում ևս ավելի ու ավելի
տեսանելի են դառնում համընկնող գծերը: Եվ կարծում ենք, ամենևին
պատահական չէ, որ Զ-րդ աշխարհամարտի ժամանակ Ստալինը ավելի հա-
ճախակի էր օգտագործում նացիստական կարգախոսները, իսկ Հիտլերը՝ ժա-
մանակ առ ժամանակ նշում էր, թե շնայած Ստալինը «ճարպիկ խաբեբա է»,
բայց խորհրդային այդ դիկտատորը «խոշոր մասշտաբի» սատանա է, որի
նկատմամբ չի կարելի շունենալ անառարկելի հարգանք: Իսկ 1944 թ. իր դեմ
կազմակերպված հայտնի խոտվությունից հետո Հիտլերը ասել է. «Ես հաճախ
եմ դառնությամբ ափսոսում, որ սպայական կորպուսը այնպես շմաքրեցի,
ինչպես դա արեց Ստալինը»⁷:

Արտասահմանյան երկրների գրականության մեջ արտահայտվել է այն
միտքը, թե Հիտլերը Լենինից է սովորել՝ ինչպես ստեղծել տեռորի վրա հիմ-
նրված, գաղտնի ոստիկանության ապարտի կողմից ամրապնդված պետու-
թյուն:

Նշեցինք, որ տոտալիտարիզմը որպես հասարակական երևույթ, գալիս է
պատմության խորքից: Այն ամբողջությամբ վերաբերում է նաև ուս իրա-
կանությանը: Չանդրադառնալով շատ վաղ անցյալին, նշենք միայն, որ 19-րդ
դարի ուսական հեղափոխական շարժման մեջ իր դրսևորումն է ունեցել այս-
պես կոչված ռադիկալ-տեռորիստական հոսանքը (Նեչաև, Տկաչով): Հարցի
պարզաբանման համար հետաքրքիր և անհրաժեշտ է հետադարձ հայացք ձը-
պել այդ մտածողների մի քանի, այսպես կոչված, հեղափոխական հարցադրում-
ներին: Հայտնի է, որ Ս. Գ. Նեչաևը (1847—1882 թթ.) եղել է «ժողովրդական
դատաստան» գաղտնի ընկերության հիմնադիրը: Վերջինիս հեղափոխական
գաղափարներին ծանոթանալու համար անհրաժեշտ է նախ և առաջ ծանո-

⁶ Տե՛ս Մ. Восленский, Номенклатура. — «Новый мир», 1991, № 9, էջ 197

⁷ Յ. Бжезвинский. Большой провал. Рождение и смерть коммунизма в двадца-
том веке, Нью-Йорк, 1989, с. 20.

Քանալ նրա կազմած «հեղափոխականի կատեխիզիսին»: Դրանք կանոններ են, որով պետք է ղեկավարվեն իսկական հեղափոխականները: Կարգալով այդ կանոնները, այն տպավորությունն է ստեղծվում, որ նեշաւը շատ հարցերում կարծես կանխագուշակել է բուլշևիկյան կուսակցութեան կազմակերպման ձևը, այն է՝ ծայր աստիճան կենտրոնացված ու բռնակալացված, որում ամեն ինչ (որոշում, ցուցում, հրահանգ և այլն) գալիս է վերևից: Նրա ցանկութեանն էր ամբողջ Ռուսաստանը ծածկել երկաթյա կարգապահութեամբ՝ օժտված այնպիսի հեղափոխական մանր բջիջներով. որոնց համար հանուն հեղափոխութեան իրականացման թուլատրելի է ամեն ինչ: Նա որոշակիորեն ժխտում է դեմոկրատիան, արհամարհում ժողովրդական զանգվածներին և ձգտում մարդկանց հեղափոխութեան տանել «վերևից»: Նեշաւը հետևյալ կերպ է ներկայացնում հեղափոխականի կերպարը. «Հեղափոխականը դատապարտված մարդ է: Նա չունի անձնական շահ, գործեր, զգացմունքներ, մտերիմներ, սեփականութիւն և անգամ անուն: Ամեն ինչ նրա համար պարփակված է միակ բացառիկ շահով, մեկ մտքով, մեկ կրքով՝ հեղափոխութեամբ»⁸: Հեղափոխականի ցանկացած գործունեությունն նա համարում է բարոյական, եթե այն ծառայում է հեղափոխութեանը: Այսպես, օրինակ, հեղափոխականը պարտավոր է ոչընչացնել բոլոր նրանց, ովքեր որևէ ձևով կամ շահով խանգարում են գլխավոր նպատակին: Ամենուրեք, այդ թվում նաև զաղտնի ոստիկանությունում, հեղափոխականը պետք է ունենա իր գործակալները: Այս տեսակետից մեզ համար արդեն զաղտնիք չէ, որ նման գործելակերպը սրբութեամբ որգեղրեց բուլշևիկյան կուսակցությունը:

Անցյալ դարի 70-ական թվականների հեղափոխական շարժումների նշանավոր տեսաբաններից էր Պ. Ն. Տկաչովը (1844—1885/86 թթ.), որ ռուս իրականութեան մեջ առավել, քան մեկ ուրիշը, հանդիսացել է Լենինի նախորդը: Իր հայացքներով նա նույնպես երբեք դեմոկրատ չի եղել: Ավելին, միշտ պնդում էր, թե պետք է հաստատել փոքրամասնութեան իշխանությունը մեծամասնութեան վրա: Եվ դրան կարելի է հասնել քիչ թվով հեղափոխականների կողմից իշխանութեան զավթման միջոցով: Այս դեպքում անհրաժեշտ է տեղորի միջոցով կազմալուծել գոյություն ունեցող իշխանությունը: Տկաչովի կարծիքով ժողովուրդը միշտ էլ պատրաստ է հեղափոխութեան, որովհետև այն նյութ է, որից պետք է օգտվեն փոքրամասնություն կազմող հեղափոխականները: Նա այն մտածողներից էր, որը միշտ երազել է իշխանութեան զավթման մասին: Տկաչովի հիմնական ցանկություններից մեկն էլ այն էր, որ հեղափոխական կուսակցությունը դառնա նաև կառավարություն: Դժվար չէ նկատել, որ այս հարցում նույնպես նա կանխել է Լենինին:

Ասվածն էլ բավական է եզրակացնելու, որ նշված ռադիկալ-տեղորիստական ուղղությունը իր մեջ արդեն ուներ տոտալիտարիզմի սաղմերը, որոնց ժլարձակման ու փարթամացման համար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Եվ կարծում ենք՝ պատահական չէ, որ այդ հեղաշրջումն ավարտվում է «Արտակարգ հանձնաժողովի» ստեղծմամբ, որի աշխատակիցներից յուրաքանչյուրը իր սեփական հայեցողությամբ կարող էր մարդկանց մահապատժի ենթարկել, չմոռանալով անպայման ասել՝ «հանուն հեղափոխութեան»:

Նախկին խորհրդային երկրում տոտալիտար ուժեր ստեղծելու շարժումը սկսվում է 1917 թ. հոկտեմբերից հետո, բոլոր բնագավառներում: Այսօր արդեն որոշակիորեն կարելի է պնդել, որ Լենինի աղետավոր ժառանգության ամենակատալիտիկ գծերից են հանդիսացել քաղաքական իշխանութեան կենտ-

⁸ Տե՛ս Н. А. Бердяев, Ըշվ. աշխ., էջ 52:

րոննացումը մի քանի մարդկանց ձեռքում և այդ իշխանություն՝ ահաբեկչության նեցուկ լինելը: Վերջինս հանգեցրեց նրան, որ կուսակցական բյուրոկրատացված ավանգարդը վերահսկողության ենթարկեց հասարակության ողջ կառուցվածքը: Եվ որպեսզի արդարացվեին, բնակչության տարբեր սոցիալական խավերի լայնածավալ հետապնդումները, Լենինը գիտակցաբար օգտագործում էր «կոլեկտիվ մեղավորներ» արտահայտությունը: Այս հանգամանքը կազմակերպված բռնությունը դարձրեց սկզբում քաղաքական, իսկ հետո՝ տնտեսական, և վերջապես՝ սոցիալական ու մշակութային խնդիրների լուծման գըլ-խավոր միջոց:

Ինչպես մինչև իշխանության զավթումը, նույնպես և դրանից հետո Լենինը իր նպատակներին հասնելու համար բացահայտորեն հանդես էր գալիս հօգուտ բռնության և զանգվածային ահաբեկման: Դեռևս 1901 թ. նա ասում էր, թե սկզբունքորեն իրենք երբեք չեն հրաժարվել տեռորից և չեն հրաժարվի: Իսկ հոկտեմբերյան հեղաշրջման նախօրյակին նա գրում էր, թե երբ ինքը դիկտատուրայի կոչ է անում, ապա հասկանում է «... մի կազմակերպություն, որի միջոցով մի դասակարգ հետևողականորեն բռնություն է գործ դնում մյուսի վրա, բնակչության մի մասը բռնություն է գործ դնում մյուսի վրա»⁹ (ընդգծումներն իմն են — Ռ. Վ.): Նշված սկզբունքից նա երբեք չհրաժարվեց և հաճախ էր կրկնում իր ճառերում: Նրան են պատկանում նաև հետևյալ խոսքերը. «Դիկտատուրայի գիտական հասկացողությունը ոչ այլ ինչ է նշանակում, քան ոչնչով շահմանափակված, ոչ մի օրենքով, բացարձակապես ոչ մի կանոնով չկաշկանդված անմիջականորեն բռնության վրա հենվող իշխանություն»¹⁰: Եվ կարծում ենք՝ ամենևին պատահական չէ, որ իշխանության զավթումից անմիջապես հետո բուլճերիկները Լենինի գլխավորությամբ ձեռնամուխ եղան նշված սկզբունքի գործնական իրականացմանը: Շարժումը դեպի տոտալիտար համակարգ փաստորեն ուղեկցվում էր բռնությունների, մահապատիժների և այլ կարգի ճնշամիջոցների կիրառմամբ: Այդ կարգի հանցանքների շարքում ստորագույն ոճրագործություն էր թագավորի ընտանիքի սպանությունը: Ավելի քան 70 տարի պահանջվեց, որպեսզի մարդկությունը, առաջին հերթին նախկին խորհրդային երկրի բնակիչները, իմանան ճշմարտությունը: Այդ ոճրագործությունը իրականացվել է ոչ թե Եկատերինբուրգի բուլճերիկների նախաձեռնությամբ, այլ վերևից նախօրոք խնամքով մտածված ու պլանավորված՝ Լենինի ցուցումով¹¹: Քանի որ այդ ժամանակաշրջանում իրականացված բռնությունների, սպանությունների, ոճրագործությունների շղթան բավական երկար է, ուստի բավարարվենք մի քանի օրինակով: Հիշենք Դոնի կազակության զանգվածային ոչնչացումը, որի հրամանը ստորագրել էր Սըվերդովը, իսկ ոճրագործությունը իրականացվել էր Տրոցկու նախաձեռնությամբ: Որոշ տվյալներով ոչնչացվել է մոտ 2 մլն. մարդ¹²: «Բանվորագյուղացիական» իշխանությունների պատժիչ բնույթը առավել պարզորոշ դրսևվորվեց Պոլոլթեում 1921—22 թթ. սովի տարիներին, երբ միլիոնավոր գյուղացիներ մահանում էին սովից, իսկ Խորհրդային իշխանությունը անդամթերքը ուղարկում էր այլ շրջաններ, անգամ Թուրքիա, որտեղ կոտորում էին ոչ մահամեղական բնակչությանը: Կասկածից վեր է, որ դա կատարվում էր գաղափարական ու քաղաքական նկատառումներով: Իր դիրքերը ամրապնդելու նպատակով նոր իշխանությունը հաճախ էր դաժան դատաստան իրա-

⁹ Լեոնով, ԵԼԺ, հ. 33, էջ 105:

¹⁰ Նույն տեղում, հ. 12, էջ 385:

¹¹ ՏՆ՝ «Как погибла царская семья. Свидетельство очевидца И. П. Майера», М., 1990.

¹² ՏՆ՝ «Комсомольская правда», 9 мая 1989.

կանացնում այն դասակարգի նկատմամբ, որի անունից հանդես էր գալիս և կառավարում: Այսպես, օրինակ, 1918 թ. գարնանը Պերմում բանվորների գործադուլի ժամանակ մահապատժի է ենթարկվել 800 մարդ, իսկ 1919 թ. մարտին Աստրախանում գնդակահարվել է 1000 մարդ¹³: Թվում էր, թե քաղաքացիական պատերազմից հետո իշխանությունները կհրաժարվեն տոտալիտար ռեժիմից և նրան բնորոշ պատժամիջոցներից, սակայն դա տեղի չունեցավ: Այս կապակցությամբ կարևոր ենք համարում 1922 թ. մարտի 19-ի Լենինի խիստ գաղտնի նամակը Քաղբյուրոյի անդամներին, որով պահանջում էր շատ սուղ ժամկետներում բռնագրավել եկեղեցիներին պատկանող արժեքները, օգտագործելով ցանկացած միջոցներ. «Եվ եթե մեզ հաջողվի,— խորհուրդ էր տալիս նա,— շատ ռեակցիոն հոգևորականների և բուրժուազիայի ներկայացուցիչների այդ առիթով գնդակահարել, այնքան ավելի լավ: Եվ հատկապես այժմ այդ հասարակությանը պետք է այնպես սովորեցնել, որպեսզի մի քանի տասնյակ տարիներ ոչ մի դիմադրության մասին չկարողանան մտածել»¹⁴: Իսկ մի քանի շաբաթ անց (1922 թ. մայիսի 15-ին) Դ. Կուրսկուն գրած նամակում Լենինը շեշտում էր, թե ՌՍՖՍՀ Քրեական օրենսգրքում պետք է ավելացնել՝ գնդակահարություն արտասահմանից առանց թույլտվության վերադառնալու համար: Կարծելով քիչ է, դարձյալ պահանջում է. «Իմ կարծիքով պետք է ընդլայնել գնդակահարության կիրառումը: Ավելացնել՝ գնդակահարություն արտասահմանից առանց թույլտվության վերադառնալու համար»¹⁵: Եվ որպեսզի հիմնավորվեն այդ ոճրագործությունները, նա միաժամանակ խորհուրդ էր տալիս մենշևիկների և այլոց գործունեության բոլոր տեսակների վերաբերմամբ գտնել այնպիսի ձևակերպում, որն այդ արարքները կապի «միջազգային բուրժուազիայի և մեր դեմ մղած» նրա պայքարի հետ¹⁶: Նշված փաստերն էլ բավական են, որպեսզի պարզ լինի, թե բուլշևիկյան կուսակցության գործիչները ինչպիսի դպրոց են անցել, ո՞վ է եղել նրանց գլխավոր ուսուցիչը և դպրոցում սովորածը ինչպե՞ս և հանուն ինչի են գործադրել: Այստեղից եզրակացություն. զանգվածային ահաբեկչությունը դառնում է բուրժուարեոս հիմնահարցերի վարչական լուծման հիմնական միջոցը:

Տոտալիտար ռեժիմից խուսափելու որոշակի հույսեր առաջացան ՆէՊ-ի իրականացման կապակցությամբ: Սակայն իրականում նշված քաղաքականության իրականացմամբ պայմանավորված որոշ հաջողությունները բավականին զգաստացրին իշխանություններին, որոնց թվում էր, թե դրանով հնարավոր կդառնա խաղաղ ճանապարհով վերականգնել «սխրահռչակ» կապիտալիզմը:

Ապրանքա-դրամական հարաբերությունների զարգացումը և դրա հետ կապված հասարակական կյանքի ժամանակավոր դեմոկրատացումը, որը կարծես թե պետք է խարխլեր տոտալիտարիզմի հիմքերը, դարձյալ զգաստացրեց քաղաքական վերնախավին և առաջին հերթին՝ ժողովուրդների «առաջնորդին»: «Եթե ՆէՊ-ը,— ասում էր Ստալինը,— կդադարի սոցիալիզմին ծառայելուց, մենք այն կուղարկենք գրողի ծոցը»¹⁷:

Կյանքի հետագա ընթացքը լիովին ապացուցեց սնանկությունը հեղափոխական պատրանքների, թե մասսաների քաղաքական գիտակցությունը ամբողջությամբ վերցրած բավական է, որպեսզի նա առավել լավ աշխատի ոչ միայն դասակարգային շահագործման, այլ նաև նյութական խթանների բա-

¹³ Տե՛ս С. И. Мельгунов, Красный террор в России. Нью-Йорк, 1979, էջ 52—53, 103:

¹⁴ Տե՛ս «Известия ЦК КПСС», 1990,

¹⁵ Լենին, ԵԼԺ, հ. 45, էջ 227:

¹⁶ Տե՛ս Լենին, ԵԼԺ, հ. 45, էջ 227—228:

¹⁷ Ստալին, Երկեր, հ. 12, էջ 171:

ցակայութեան պայմաններում: ՆէՊ-ը գործնականում ցույց տվեց, որ մասնավոր նախաձեռնութիւնը տնտեսապես առավել արդունավետ գործոն է, քան կենտրոնացած պետական համակարգը: Վերջինիս դեպքում մարդը ամբողջութեամբ կորցնում է իր տնտեսական ազատութիւնը և ամբողջ կյանքում կախման մեջ ընկնում պետութիւնից, որից փախչել կամ ազատվել փրկագնի միջոցով (ինչպես ստրուկը կամ ճորտը) դառնում է անհնար: Այս շրջանում հաղթանակեց նաև քաղաքական տոտալիտարիզմը: Նկատի ունենք ողջ քաղաքական համակարգի բացարձակ պետականացումը, ներառյալ հասարակական կազմակերպութիւնները: Ստեղծվել էր այնպիսի համակարգ, որում անգամ Ստալինի մտերիմ զինակիցները կարող էին դառնալ դատական պրոցեսի զոհ, իսկ մյուս օրը՝ գնդակահարվել: Օրինակ, Մոլոտովը և Կալինինը, որոնք անմիջակներեն մասնակցում էին մահապատժի ենթակաների ցուցակագրմանը, շարունակում էին մասնակցել նաև Քաղբյուրոյի նիստերին, և այն էլ այն դեպքում, երբ իրենց կանայք «ժողովուրդների առաջնորդի» հրամանով ուղարկվել էին ուղղիչ աշխատանքների ճամբար: Չափազանցութիւն չի լինի, եթե նշենք, որ քառորդ դարից ավելի նախկին խորհրդային երկրում գերագույն իշխանութիւնը գտնվել է մի խումբ անողոք դավադիրների ձեռքում, որոնց համար սովորական էր դարձել հազարավոր այսպես կոչված «ժողովրդի թշնամիներին» մահվան ուղարկելը: Մեր կարծիքով ամեն ինչ պայմանավորել միմիայն Ստալինի ֆենոմենի բացառիկութեամբ, կարծում ենք՝ ճիշտ չէ: Լինելու Տրոցկին, Ջինովկը թե Լենինի զինակիցներից մեկ ուրիշը, երկիրը դարձյալ կգնար նույն ճանապարհով: Նկատի ունենք ոչ միայն այն հանգամանքը, որ քաղաքացիական պատերազմի տարիներին նշված երկու անձնավորութիւններն էլ շատ հետևողականորեն էին իրականացնում «կարմիր տեռորի» քաղաքականութիւնը, այլ նաև այն, որ Լենինի զինակիցներից շատերը, որոնք խմբվել էին Ստալինի շուրջը, շարունակում էին աշխատել որթան հնարավոր է առավել արագ և իհարկե բռնութիւններ գործադրելով երկիրը այսպես ասած՝ ներքաշել սոցիալիզմի մեջ: Կարծում ենք՝ կարևոր է նաև հետևյալ հարցի պատասխանը. Երե ստալինիզմը, ինչպես փորձում են ներկայացնել առանձին պատմաբաններ, փիլիսոփաներ, հրապարակախոսներ և այլն, լեճիջան կուրսի կոպիտ խախտում, աղճատում էր և այլն, ապա ինչպե՞ս և ի՞նչ ձեռով այն կարողացավ հաստատվել, և ինչո՞ւ դրան չկարողացավ խանգարել լեճիջան «խիզախ» գվարդիան: Պատասխանը միանշանակ է, Ստալինը և նրա համախոհները այն քաղաքական համակարգի ծնունդ են, որի հիմքերը դրեց Լենինը:

50-կան թվականների կեսերին տոտալիտար համակարգը հիմնականում կառուցված էր, և Ստալինի մահից հետո առաջվա զանգվածային պատժամիջոցների անհրաժեշտութիւն չէր զգացվում: Բոլոր ընդդիմադիր ուժերը, այլ կերպ մտածողներն ու գործողները վերացված էին, իսկ վախն ու սարսափը դրված էր նոր սերնդի հիշողութիւն մեջ: Նման պայմաններում բավական էին միայն զուտ կոսմետիկական միջոցները, ասենք, օրինակ, այլախոհ մարդկանց տեղավորումը հոգեբուժական հիվանդանոցներում և այլն: Իսկ այնպիսի բախումներ, ինչպիսիք բանվորների խաղաղ ցույցի գնդակոծումն էր նոյնիերակակում 1962 թ., և նրա ղեկավարների մահապատիժը, դառնում են հազվագյուտ: Վերը շարադրվածից երևում է, որ ազդելով զանգվածների գիտակցութեան վրա, տոտալիտար ռեժիմները ամեն կերպ ձգտել են նրանց մեկուսացնել կողմնակի ազդեցութիւնից, հնարավորութիւն շտաղով մարդկանց սեփական երկրի կարգերը համեմատելու կամ համադրելու մյուս ռեժիմների հետ: Տոտալիտար համակարգին բնավ պետք չեն ինքնուրույն, սեփական մտածելակերպ ունեցող մարդիկ, այդպիսիներին մեկուսացնում կամ ոչնչացնում են: Այն, որ տոտալիտարիզմը նպաստում է հատուկ տիպի վար-

քազժի և իրականության ըմբռնման ձևավորմանը, դրա վկայութուններից մեկն էլ այն է, որ այսօր ևս, տասնամյակներ անց, բնակչության շրջանում կան մարդիկ, որոնք չընդունելով ստալինիզմի քննադատությունը, պատճառաբանում են, թե Ստալինի ժամանակ գոյություն է ունեցել կարգ ու կանոն (եթևի նկատի ունեն ահ ու սարսափի, համակենտրոնացման ճամբարների առկայությունը), որ նրա ղեկավարությամբ ապահովվել է հաղթանակը երկրորդ աշխարհամարտում և այլն: Որպես օրինակ կարող ենք վկայակոչել 1992 թվականի փետրվարի 23-ի, ինչպես նաև 1993 թվականի մայիս և հունիս ամիսների իրադարձությունները Մոսկվայում:

Համանման ուսուցիչ դրսևորվում է նաև տոտալիտարիզմի ուժեղացումը ապրած մյուս երկրներում: Այսպես, օրինակ, 1989 թվականի ապրիլին «Իզվեստիա» թերթի թղթակիցները լինելով Գերմանիայում զրուցում են բնակիչների հետ և այն հարցին, թե ինչպես են վերաբերվում անցյալին, ստանում են տարբեր պատասխաններ ու մեկնաբանություններ, որոնցից առանձնացնում ենք հետևյալը. «Բոլոր նրանք՝ «այսօրվա քաղաքագետները», Հիտլերի ներքանը շարժեն, դրա համար էլ ցեխ են շարտում նրա վրա, սևացնում են մեր փառավոր անցյալը: Իսկ Հիտլերի ժամանակ մենք բոլորից բարձր ենք եղել: Նա ժողովրդի մասին է մտածել՝ կառուցել բնակարաններ, ճանապարհներ, ստեղծել աշխատանքային տեղեր և այլն: Շատ կցանկանայինք տեսնել, թե այսօր նրանք (այսօրվա քաղաքագետները — Ռ. Վ.) որտեղ կլինեին, եթե Հիտլերը նորից գար»¹⁸: Այն, որ այսօր ևս գտնվում են մարդիկ, որոնք ցանկացած ձևով փորձում են արդարացնել 20-րդ դարի այդ երկու անգերազանցելի ոճրագործներին, ավելորդ անգամ վկայում է այն մասին, որ տոտալիտար «սինդրոմը» համեմատաբար ավելի հեշտությամբ է ձևավորվում այն մարդկանց մեջ, ովքեր զրկված են սովորական ապրելակերպից և արժեքային կողմնորոշումներից:

Այսպիսով, անկախ այն բանից, թե տոտալիտարիզմը ո՞ր երկրում և ի՞նչ ձևերով է (Ֆաշիզմ, սոցիալիզմ և այլն) հանդես եկել, այն հիմնականում 20-րդ դարի ժանտախտն էր, որ մարդկությունից միլիոնավոր զոհեր խլեց:

Р. А. ВАНЕСЯН — Тоталитаризм как исторический феномен. — Не смотря на то, что тоталитаризм уходит корнями в глубь истории, как тип законченного политического режима он присущ 20-му веку. В 50-е годы политологи (особенно американские) вплотную занялись изучением концепции тоталитаризма. В статье подвергаются обстоятельному анализу основные черты этого режима. Как классическая форма такового представлены фашистская Германия и коммунистический Советский Союз, выявляются характерные сходства и различия, показаны роль и значение порочного ленинского теоретического наследия и кровавой деятельности при установлении тоталитарного режима.

¹⁸ «Искусство», от 21 апреля 1989.